

ամբողջութեամբ ապացոյց է որ մօտաւոր ժամանակներու մայր տեղ եղել է բնակութիւն, վերահսկողութիւն և այլն:

(Շարունակելի)

ՔԱԶԲԵՐՈՒՆԻ

ԱԶԳԱՅԻՆ

Անցեալ Ապրիլ ամսոյ 25-ին Ազգիս Վեհափառ Կաթողիկոսը բարեհաճեց ուղևորուիլ դէպ Երևան Պարսից Շահի հետ տեսակցելու համար:

Նոյն օր առաւօտեան ժամ 9-ին երբ Նորին Օծութիւնը եպիսկոպոսներով վարդապետներով և բոլոր միաբաններով և ժողովրդականաց խուռն բազմութեամբ հանդիսաւոր կերպիւ իջաւ Վեհարանից, մտաւ Ս. Էջմիածնի Տաճարը և Միածնաէջ Ս. Սեղանի առաջ աղօթելուց յետոյ, ելաւ Տաճարից և երկկարգ շարուած ձեմարանի աշակերտաց միջով անցնելով և օրհնելով նորանց, նստեց հիւսիսային դրան առաջ սպասող կառքում, ունելով իւր հետ ուղեկիցներ, Սինօդի անդամ Գեր. Երեմիա, Ներսէս, Սարգիս և Մամբրէ եպիսկոպոսներ և իւր գաւազանակիր Արժ. Սահակ վարդապետը և Սինօդի առանձին յանձնարարութեանց աստիճանաւոր Ռուբէն Մելիք-Աղամեանցը:

Վաղարշապատից սկսեալ մինչ Երևանայ այգիներն, Վեհափառ Կաթողիկոսի գնացքը շրջապատուած էր ոստիկանութեան ներկայացուցիչներով և այլ բազմութիւ հեծելազօր պահուորդներով և ժողովրդով: Վեհափառ Հայրապետի կառքի առաջից ընթացող ձիերի վերայ նստած գնում էին երկու վարդապետներ, Հայրապետական խաչն ու գաւազանն ի ձեռին: Երևանայ այգիներին մօտենալուն պէս, դիմաւորեցին Նորին Օծութեան Երևանայ Փոխանորդ Գեր. Սուքիաս Եպիսկոպոսն քահանայական դասով, Քաղաքագլուխը՝ քաղաքային վարչութեան տնօրէններով, ոստիկանապետը՝ բազմութիւ հեծելազօրներով և

ժողովրդեան բազմութեամբ: Այստեղ քաղաքագլուխը ի դիմաց
 Երևանայ հասարակութեան մատոյց Նորին Վեհափառութեան
 աղ և հաց, որոց Վեհափառ Հայրապետը սիրով ընդունելով
 օրհնեց բոլորին և շարունակեց իւր ճանապարհը: Ժամ 11 էր
 երբ Նորին Օծութիւնը փառաւոր հանդիսով մուտ գործեց
 Երևան և հասնելով Ս. Սարգիս եկեղեցւոյ մօտ՝ իջաւ կառքից,
 ուր դիմաւորեց Նորան Երևանայ Փոխ. Նահանգապետը բարձ-
 րաստիճան մարդիկներով: Այստեղ կարգաւ կանգնած սպառուժ
 էին տեղական հայոց ուսումնարանների աշակերտները և աշա-
 կերտուհիները իւրեանց ուսուցչաց և ուսուցչուհեաց հետ
 և արքունի իգական պրօգիմնազիօնի աշակերտուհիքը: Այստեղ
 Վեհափառ Հայրապետը մտնելով ամպշովանու տակ, և եկեղե-
 ցական թափորով յառաջ գնալով, մտաւ եկեղեցի, աղօթեց,
 կարդաց սահմանեալ Սաղմոսը, և այնտեղից դուրս ելնելով, գնաց
 Առաջնորդարան, որի մուտքի առաջ կանգ առնելով՝ կարդաց
 «Պահպանիչ՝ աղօթքը և օրհնելով ամէնին՝ արձակեց խաղաղու-
 թեամբ: Մի քառորդ ժամից յետոյ, պաշտօնապէս ներկայացաւ
 Նորին Օծութեան Երևանայ Նահանգապետ գեներալ Էյսովնանտ
 Շալիկովը, որը ներողութիւն խնդրեց Նորին Օծութիւնից իւր
 ժամանակին իրեն չդիմաւորելու համար, յայտնելով իւր խիստ
 զբաղուած լինելը Շահի գալստեան և իւր Նոյն օրը ի Զուլֆա
 ճանապարհորդելու մասին: Հայրապետը Նորին գերազանցու-
 թեան հարկաւոր յանձնարարութիւններ տալով՝ արձակեց:
 Նոյն երեկոյեան Ս. Սարգիս եկեղեցւոյ գաւթում, առաջնոր-
 դարանի հանդէպ, կատարուեցաւ հրաւառութիւն, ուր գոյն-
 զգոյն լապտերների լուսոյ տակ ծփում էր զբօսնող ժողովրդեան
 խուռն բազմութիւն, իսկ Քեմական դպրոցի երգեցիկ աշակերտ-
 ները երգում էին:

Նոյն ամսոյ 26-ից սկսեալ Վեհափառ Հայրապետը ընդու-
 նում էր շարունակ Հայ, Ռուս և Տաճիկ բարձրաստիճան
 անձանց և զանազան հասարակութեան անդամոց, նաև բոլոր
 տեղական Հայ ուսումնարանների վարչութեան, աշակերտաց և
 աշակերտուհեաց: Վեհափառին ներկայացաւ և գեներալ Քիշ-
 միշեանցը, որը Շահի գալստեան պատճառով գտնուում էր Երե-

ւանում: Անպակաս էին զանազան բերանացի և գրաւոր խընդ-
րատուներ, որոց Վեհափառը ընդունում էր Հայրապետական
գթութեամբ և կարգադրում հարկաւորը: Վեհափառը իւր
կողմից ուղարկում էր թեմական դպրանոցի հարցաքննութեանց
ներկայ լինելու Գեր. Մամբրէ Եպիսկոպոսին, որից ստանում էր
հարկաւոր զեկուցումներ դպրանոցի յառաջագիմութեան մո-
տին: Ահա այսպիսի զբաղմունքներով Նորին Օծութիւնը պարա-
պած էր մինչ 30 Ապրիլի, երբ պաշտօնապէս յայտնի ելաւ, որ
Նորին Մեծութիւն Պարսից Շահը, կըսրեհաճի ընդունել Նորին
Վեհափառութեան մայիսի 2-ին այն է՝ իւր գալստեան հետե-
ւալ օրը առաւօտեան, որովհետեւ նա մուտ կգործէ Երեւան
Մայիսի 1-ին երեկոյեան 6րդ ժամին:

Մայիսի 2ին առաւօտեան 7 ժամին ներկայացաւ Նորին
Վեհափառութեան Ոստիկանապետը և Քաղաքագլուխը, յայտ-
նելով որ Նորին Մեծութիւն Պարսից Շահը, պատրաստ էր
ընդունել իրեն: Այս ժամանակից սկսուեց եկեղեցւոյ զանգակա-
հարութիւնը, և Վեհափառը դուրս գալով առաջնորդարանից,
նստեց վից ձիերով զոյգ զոյգ լծուած կառքը, որը պատրաստի
սպասում էր Նորան: Գնացքի առաջից ընթանում էին ոստի-
կանապետը և քաղաքագլուխը, սոցանից յետոյ՝ հայ և թուրք
համբարները իւրեանց դրօշակներով, ապա գնում էր մի կառք
ևս՝ որոյ մէջ նստած էին երկու վարդապետներ, ունենալով իւր-
եանց ձեռքում Հայրապետական խաչն ու գաւազանն, իսկ սո-
րանից յետոյ գնում էր Վեհափառ Հայրապետի կառքը, որի յե-
տին կողմում կանգնած էին Նորին Օծութեան երկու կարմրա-
զգեստ շաթիրները գաւազանները ձեռքերում բռնած, իսկ
կառքի աջ ու ձախ կողմերից գնում էին Վեհափառ Հայ-
րապետի Դրան երկու կանաչազգեստ ֆարրաշները սպիտակ
նժոյգների վերայ նստած: Սոյն կառքին հետեւում էին այլ
ևս չորս կառքեր, որոնցից առաջինում էին՝ գաւազանակիր
Արժ. Սահակ վարդապետը, Հայրապետական գաւազանն ի
ձեռին և թարգման Վասակ Մաղաթեանցը, երկրորդում՝
Ս. Էջմիածնի Տաճարի աւագ լուսարար և Անդամ Սինօգի
Գեր. Երեմիա Եպիսկոպոսն և փոխանորդ Երեւանայ Գեր.

Սուքիաս եպիսկոպոսն, երրորդումն՝ անդամք Սինոդի Գեր. Սարգիս և Մամբրէ եպիսկոպոսունք, և չորրորդում՝ պաշտօնակատար Պրօկուրօրի Սինոդի Պ. Կ. Իւզբաշեանցը և աստիճանաւոր առանձին յանձնարարութեանց Պ. Ռ. Մելիք-Աղամեանցը, Ամբողջ գնացքը շրջապատուած էր հեծեալ ոստիկանական պաշտօնեաներով և ժողովրդականաց խուռն բազմութեամբ, տեսարանը վերին աստիճանի սրտառուչ և փառահեղ էր: Երբ Վեհափառի կառքը հասաւ Նահանգապետի տան դրան առաջ, Նորին Օծութեան գլխաւորեցին Նահանգապետ Շալիկովը և բոլոր բարձրաստիճան անձինք, նոքա ընդունելով Վեհափառին հրաւիրեցին Նորան իւր հետեւորդների հետ դահլիճ, ուր մի փոքր հանգիստ առնելուց յետոյ, մօտաւ նոյն դահլիճը Նորին Մեծութիւն Պարսից Շահ Նասրէդդինը, մօտեցաւ Վեհափառին, և Նորին Օծութիւնը ոտքի վերայ կանգնելով և ողջունելով ասաց Շահին հետեւեալ խօսքերը:

ՏԵՐ ԱՐԳԱՅ,

« Երեկ և այսօր ընդհանուր է ուրախութիւնն ի միջի ժողովրդականաց ի պատճառս շնորհաբեր գալստեան Ձերդ Արքայական Մեծութեան և վասն բարեկամական քաղցր յարաբերութեանց ընդ Մեծի Կայսերն Ռուսաց:

Իսկ իմս ուրախութիւն արդէն լցեալ է, հաւաստի լինելով, զի հայազգի ժողովրդականք ամենհաւատարիմ հպատակք Մեծի Տէրութեանդ առատապէս վայելեն զբարձրագոյն հովանաւորութիւն, զխնամս և զգթութիւն Ձերդ Արեգակնափայլ Մեծութեան:

Այսու աղագաւ՝ միայ ինձ զիմ խորին շնորհակալութիւնս մատուցանել վասն այնպիսի բարերարութեանց, և ի խորոց սրտի արտայայտել զերախտագիտութեան իմոյ զզգացմունս վասն այնր բարձրագոյն այցելութեան, որում մեռասան ամօք յառաջ արժանիս արարիք զՍուրբ Աթոռն Էջմիածնի. ուստի՝ շնորհաւորելով զշնորհաբեր գալուստ Մեծի Շահնշահիդ յայս

քաղաք, աղօթեմ առ Աստուած, որպէս զի՛ նա ինքն խաղաղ, անփորձ և բարի ճանապարհ պարգևեացէ Ձերում՝ Մեծութեան. նա ինքն Ձեզ յաջող և փառաւոր վերադարձ տացցէ ի թագաւորական մայրաքաղաքդ ի Թեհրան, »

Նորին Մեծութիւն Շահնշահն Պարսից յայտնեց թէ՛ ինքը շատ շնորհակալ է Վեհափառից, որ նեղութիւն է կրել գալ Երեւան և դիմաւորել իրան. սակայն ցաւում է, աւելացրեց Շահը, որ ժամանակի սղութեան պատճառով չի կարող փոխադարձ այցելութիւն անել, ուստի՝ իւր վերադարձին կայցելէ իւր սրտին մօտիկ Հայոց սրբավայր Ս. Էջմիածնին: Նորին մեծութիւնը բարեհաճեց նաև իւր գոհունակութիւնը յայտնել Իրանի հայերից և յանձնեց Նորին Վեհափառութեան որ եթէ ինքը Նորին Սրբութիւնը, իբրև գլուխ հայ հոգեւորականութեան, կունենայ որևէ խնդիր վերաբերեալ Իրանի հայ հօտին, ուղղակի այդ մասին թող իրեն գրէ: Շահի կամաց համաձայն, Վեհափառ Հայրապետը ներկայացրեց Նորին Մեծութեան իւր հետ եկող բոլոր հոգեւորականներին և աստիճանաւորներին, որոց անունները համաձայն հրամանի Նորին Մեծութեան՝ ցուցակագրուեցան: Ի վերջոյ՝ արքայն ընդունելով Վեհափառ Հայրապետի հրաժարական սղջոյնը, սիրալիք կերպով բաժանուեց Նորին Օծութիւնից, որը նոյնպիսի փառաւոր հանդիսով վերադարձաւ դարձեալ դէպ Առաջնորդարան: Այստեղ մի ժամից յետոյ՝ Վեհափառ Հայրապետը բարեհաճեց ընդունել Երևանի ուսուցչական սեմինարիայի վերադառնալ Պ. Սուշլեւսկուն ուսուցիչների և աշակերտների հետ միասին, ուր վերջիններից մինը կարգաց հետեւեալ ճառը.

ՎԵՀԱՓԱՌ ՏԵ՛Ր,

Մատուցանելով մեր ի սրտէ բղխեալ որդիական համբոյրը Ձերդ Վեհափառութեան Սրբանուէր Աջոյն, մենք, Երևանայ ուսուցչական Սեմինարիայի Հայ աշակերտներս՝ համարձակվում ենք շնորհաւորել Ձեր գալուստը:

Թէպէտև մենք այժմ գտանվում ենք այլևայլ հանգամանքների մէջ, սակայն չենք կարող մոռանալ այն սէրը և հոգին, որը կապում է մեզ

անքակելի հանգոյցներով մեր կրօնքի և ազգութեան հետ, որը այնքան փոթորիկներից և տառապանքներից յետ՝ մնաց տոկոս և հաստատուն։ Կըցանկամք, որ ինչպէս մինչի այժմ մեր եկեղեցին մնացել է ազաւ և ապահով ամենայն վտանգներից շնորհիւ մեր արժանայիշատակ Հայրապետների և ազգի գործիչների, որոնց այժմեան ներկայացուցիչը Դուք էք, նշնպէս մնայ և յաւիտեան։

Թո՛ղ ցնծայ մեր ազգը, որ ունի գոնեա մի նեցուկ, մի հոգեւոր գլուխ, որոյ խնամքը, ջանքը, սփռուած է ամեն մի հայ անհատի վերայ։ Թո՛ղ մխիթարուին մեր վշտահար սրտերը, որ գոնեա ունինք մի սեպհականութիւն, այն է՝ սեպհական եկեղեցի, որը տառանուելով փորձանաց ելեւէջների մէջ, մնացել է և մնում է անյողգողդ շնորհիւ մեր հոգեւոր Գլուխների։

Առաքելո՛ղ Քրիստոսի և գործիչ Հայրենեաց, յուսալով Ձեր խնամքների վերայ, մենք կըմենք միշտ հաւատարիմ Հայաստանեայց սուրբ և Առաքելական եկեղեցւոյն և նորա Մատակարարին, թո՛ղ Ձեր սուրբ ձեռները պատրաստ լինին գործելու եկեղեցւոյ բարւոքութեան և ազգի բարելաւութեան համար։ Իսկ մենք, վայելելով Ձերդ Վեհափառութեան ջանքերի պառուշները, կառաքենք ջերմագին աղօթքներ առ Ամենաբարձրեալն Աստուած, որ ապա Ձեզ ոյժ, կարողութիւն, զօրութիւն և երկար տարիներ, որ կարողանանք մենք ապահով մնալ Ձեր հովանաւորութեան և պաշտպանութեան տակ։

Ձերդ Վեհափառութեան խոնարհ ծառայ,
աշակերտ Բ. դասարանի Երևանայ Ռուսաց
Ուսուցչական Սեմինարիայի

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԹՈՒՄԱՆԵԱՆՑ.

1889 տմի 30 Ապրիլի

յերեւան։

Պ. վերատեսուչ Սուշլեւսկին յայտնեց թէ ի վաղուց անտի՝ ինքրի, ուսուցչական իւղմբը և աշակերտները՝ փափագում էին Վեհափառի օրհնութեանը, այժմ ինքն իրեն բաղդաւոր է համարում ծնկաջօք արժանանալ այդ օրհնութեան։ Վեհափառի օրհնութիւնն ստանալով Պ. վերատեսուչը, յայտնեց իւր գոհունակութիւնը հայոց կրօնի դասատու Աթանասեանց Առնո՛ղ քահանայից, որին խրախուսելու համար, Վեհափառ Հայրապետը

բարեհաճեց ի ներկայութեան ուսուցչաց և աշակերտաց շնորհել նորան արծաթեայ ոսկեզօծ քահանայական խաչ պարանոցի։ Վերատեսուչը տեսնելով այդ՝ ասաց, «Ձերդ Սրբութիւն, այդ խաչը միշտ հովանի կլինի մեր և ուսուցչանոցիս վերայ»։ Վեհափառը օրհնելով և «Պահպանիչ, ասելով՝ յորդոր կարգաց աշակերտաց, մնալ միշտ հաւատարիմ դէպի իւրեանց եկեղեցին ու կրօնը և դէպի Մեծ գահն Ռուսիոյ՝ ու արձակեց։ Այդ երեկոյեան կրկին հրաւիրութիւն էր առաջնորդարանում։

Միւս օրը 3ին Մայիսի երբ Վեհափառը արդէն բարեհաճում էր թողնել Երեւանը և վերադառնալ Մայր Աթոռը, ներկայացաւ նորին Վեհափառութեան Երեւանայ գիմնազիօնի վերատեսուչ Պ. Բրաժնիկովը, որը շտապել էր աւետել նորին Վեհափառութեան թէ՛ արդէն ստացել է պաշտօնական գրութիւն, Հայոց կրօնը արքունի միջնակարգ ուսումնարաններում հայերէն լեզուով դասախօսելու։ Վեհափառը բարեհաճեց պատասխանել նորան, թէ՛ շատ ուրախ է, որ այդպիսի համակրանք է վերաբերվում դէպի Բարձրագոյն հրամանը և յոյս ունի՝ որ այդ կարգադրութիւնը իւր ժամանակին, այն է՝ սկսեալ առաջիկայ սեպտեմբերից, կանոնաւոր ընթացք կունենայ։ Առաւօտեան ժամ 9 էր արդէն՝ երբ Վեհափառը բարեհաճեց դուրս գալ առաջնորդարանից։ Նորին Օծութեան թեւերից բռնած էին Փոխ. Նահանգապետը և Գաղաքագլուխը և առաջնորդում էին դէպի եկեղեցի, ուր մօտեւելով և աղօթելով, դուրս հկաւ, սրտագին օրհնեց բոլոր բաղմութեան և նստեց կառք։ Ինչպիսի ոգևորութեամբ ժողովրդակականաց, շքեղութեամբ և փառաւոր գնացքով որ հասել էր նորին Օծութիւնը Երեւան, նոյն կերպով ևս վերադառնալով հասաւ ի Ս. Էջմիածին ժամ 11ին։

Էջմիածնի հիւսիսային մեծ դրան առաջ իւր Պետին արդէն սպասում էին Ս. Էջմիածնի ամբողջ միաբանութիւնը զգեստաւորուած խաչով ու խաչուառով, այստեղ էին նաև շարուած ձեմարանի բոլոր աշակերտները իւրեանց Տեսչի և ուսուցչաց հետ, նոյն և Վաղարշապատի ծխական ուսումնարանի աշակերտները իւրեանց ուսուցիչներով և իսկոն բաղմութիւն ժողովրդեան։ Վեհափառը հասնելով այստեղ,

իջաւ կառքից, մտաւ ամպհովանու տակ, և երգեցիկ խումբը «Հրաշափառ Աստուած» շարականը երգելով՝ յառաջ գնացին դէպ Ս. Տաճարն, ուր Վեհափառը աղօթելուց յետոյ՝ դուրս եկաւ, օրհնեց բազմութեան «պահպանիչ» աղօթքով՝ և ելաւ Վեհարան:

Ամսոյս 18-ին ժամը 11^{1/2} Տէր Կառավարչապետն Կովկասու Իշխան Ա. Մ. Դօնդուկով Կօրսակովը բարեհաճեց այցելել Ս. Էջմիածնին, Նորին պայծառափալութեան ընդունելութիւնը կարգադրութեամբ Վեհափառ Կաթողիկոսի ազգիս եղաւ ըստ ամենայնի համապատասխան Բարձր կոչման և անուան Իշխանի, որը Ս. Էջմիածնի պարիսպը ոտք կոխելուն պէս ուղղակի գնաց Տաճարը, աղօթեց և թանգարանը դիտելուց յետոյ՝ գնաց Վեհարան, ուր առաջուց պատրաստուած սենեակում մի փոքր հանգիստ առնելուց յետոյ, մտաւ Վեհափառ Կաթողիկոսի դահլիճը: Այստեղ Նորին Օծութիւնը ունենալով իւր շուրջը Արքեպիսկոպոսունք և Նպիսկոպոսունք, ողջունեց Նորին Պայծառափայլութեանը: Տէր Կառավարչապետը առանձին իմն սիրով և յարգանքով պատասխանեց ողջունին, աւելացնելով թէ՛ դիտմամբ իւր ճանապարհորդութիւնը սկսեց Նրեանոյ նահանգից, որպէս զի քանի Վեհափառը չէ՛ գնացել ամարանոց, կուրսդանայ իւր տեսակցութեան փափագը կատարել: Այնուհետեւ Վեհափառը ունեցաւ Իշխանի հետ երկարատեւ առանձին խօսակցութիւն. թարգմանն էր Սինօգի առանձին յանձնարարութեանց աստիճանտոր Պ. Ռ. Մելիք-Ագապեանը:

Ժամը 1^{1/2}ին մատուցուեց նախաճաշիկ. սեղանի հրուիրուած էին նաեւ Վաղարշապատի Պետական վարչութեանց մեծաւորները, նախաճաշիկի միջոցին Վեհափառը ռաի կանգնելով առաջարկեց բաժակ Ռուսիոյ Ամենօրմած Կայսեր կենացը, որը խմուեց ոգևորութեամբ և կեցցէներով, իսկ ձեմարանի երգեցիկ խումբը երգեց «Տէր կեց՛ զԱրքայն»: Նորին Պայծառա-

փայլութիւնը կամենում էր արդէն Վեհափառի կենացը խմել, երբ Նորին Օծութիւնը կանխեց առաջարկել իշխանի կենացը, որը իւր կողմից իսկոյն առաջարկեց և Նորին Օծութեան կենացը. նախաճաշիկը անցաւ ուրախ և վայելուչ հանդիսիւ: Նախաճաշիկից յետոյ կրկին Վեհափառը և Իշխանը առանձնացան. ժամ 4-ն էր արդէն, երբ Էջմիածնի բարձր հիւրը տուեց իւր սրտագին մնաս բարեւը ազգիս Կաթողիկոսին, յայտնելով թէ՝ ուրախ է շատ որ Էջմիածնի վանքում, ինչպէս նկատուի է, տիրում է կարգ, կանոն և խիստ կարգապահութիւն և երևում է որ Հայոց սրբավայրը կառավարվում է մի զօրեղ և փորձառու բազկով. ժամը 4½ Իշխան Կառավարչապետը թողեց Էջմիածինը և մեկնեցաւ Երևան:

Վաղարշապատի ժողովրդականը, Էջմիածնի միաբանութիւնը, հոգեւոր ձեմարանի կազմակերպութիւնը, և Վաղարշապատի երկսեռ դպրոցների աշակերտները և աշակերտուհիները, սրտառուց կերպով պատուեցին Տ. Կառավարչապետի գալուստը և պատիւ ունեցան ընդունել Նորին Պայծառափայլութեան լիուլի շնորհակալութիւնը: Իշխանը իւր հետ ունէր Երևանայ Նահանգապետ Գեներալ լէյտինանոյ Շալիկովին, իրեն գիւլանատան կառավարիչ Պօլկովնիկ Շատիլովին, աստիճանաւոր առանձին յանձնարարութեանց Ի. Ք. Խ. Պօլեակովին և երկու ագիւտանտներ—Շտեմբօկին և Կրուդէնշտեյնին, որոնք արժանացան Նորին Օծութեան Հայրապետական օրհնութեան: